ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 812-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2024.05.27-2024.06.09 Պաշտոնական հրապարակման օրը 31.05.2024	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	30.05.2024
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	30.05.2024
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.06.2024	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2024 թվականի N 812-Ն

ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Շուկայի վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1| Հաստատել Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից վերահսկողության ընթացքում այլ պետական մարմնի լիազորություններին առնչվող խախտումների բացահայտման դեպքում տեղեկացման եղանակը և ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:

2| Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

Երևան

30.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
մայիսի 30-ի N 812-Ն որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կողմից վերահսկողության ընթացքում այլ պետական մարմնի լիազորություններին առնչվող խախտումների բացահայտման դեպքում տեղեկացման եղանակը և ընթացակարգը:

2. Տեսչական մարմինը վերահսկողության ընթացքում այլ պետական մարմնի լիազորություններին առնչվող խախտումների բացահայտման դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով տեղեկանք (Ձև N 1) է ներկայացնում համապատասխան պետական մարմին՝ նշելով.

1) տնտեսավարող սուբյեկտի իրավաբանական անձ լինելու դեպքում անվանումը, գտնվելու վայրը, իսկ տնտեսավարող սուբյեկտի անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ անունը, հայրանունը, ազգանունը և բնակության վայրը.

2) տնտեսավարող սուբյեկտի գործունեության տեսակը.

3) տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրը.

4) լիցենզիայի համարը և այն տալու ամսաթիվը.

5) հայտնաբերված իրավախախտման տեսակը և դրա առնչությունը համապատասխան պետական մարմնի հետ:

3. Տեսչական մարմինն այլ պետական մարմնի լիազորություններին առնչվող խախտումների բացահայտման դեպքում տեղեկանքի հետ կարող է ներկայացնել նաև ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում պահանջած տեղեկություններ, փաստաթղթեր, պատճեններ, լուսապատճեններ և գործին վերաբերող այլ նյութեր, եթե դրանք առնչվում են համապատասխան պետական մարմնի լիազորություններին:

Ձև N 1

(ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ)

_____

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N_____

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Տնտեսավարող սուբյեկտի անվանումը (իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը) _____
_____
_____
_____

2. Գտնվելու վայրը (բնակության կամ հաշվառման վայրը)_____
_____

3. Տնտեսավարող սուբյեկտի գործունեության տեսակը_____
_____

4. Գործունեության իրականացման վայրը_____
_____

5. Լիցենզիայի համարը և այն տալու ամսաթիվը_____
_____

6. Հայտնաբերված իրավախախտման տեսակը և դրա առնչությունը

համապատասխան պետական մարմնի հետ _____
_____
_____
_____
(Տեսչական մարմնի ղեկավարի անունը, ազգանունը)

_____ _____
(ստորագրությունը) (ամսաթիվը)

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Ա. Հարությունյան**

31.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 31 մայիսի 2024 թվական: